

**ՇԱՐՄԱՀԱՅՈՒՄԱԿԱՆ ՈՐՈՇ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Կատվայան Վիկտոր

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Խառատյան Մելանյա

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Սահակյան Նինա

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ

DOI: 10.54503/978-9939-970-08-0-114

Ներածություն

Ինչպես ընդհանուր առմամբ բարբառային հայերենի, այնպես էլ առանձին բարբառների շարահյուսական իրողությունները դեռևս մնում են չուսումնասիրված: Դրանց հիմնավորապես չեն անդրադարձել ընդհանուր բարբառագիտական բնույթի աշխատությունների հեղինակները, բարբառային առանձին միավորների հետազոտողները: Որոշ դեպքերում արվել են մեկ-երկու դիտարկումներ, սակայն դրանք հիմնավոր գիտական եզրահանգումներ կատարելու հնարավորություն չեն տալիս: Շարահյուսական իրողություններին անդրադարձ չկա նաև բարբառների դասակարգման որևէ տարբերակում: Այնուամենայնիվ, Հայերենի բարբառագիտական ատլասի /ՀԲԱ/ նյութերի հավաքման ծրագրում կարելի է առանձնացնել մոտ մեկ տասնյակ զուգաբանություններ, որոնք այս կամ այն չափով վերաբերում են բարբառային լեզվի շարահյուսական համակարգին²՝ նախադասության անդամների շարադասությանը, համաձայ-

¹ Տե՛ս **Ս.Բաղդասարյան-Թափալցյան**, *Մշո բարբառը*, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1958, էջ 189-190. **Հ.Մկրտչյան**, *Գարնո բարբառը*, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1952, էջ 100-101. **Ա. Հանեյան**, *Տիգրանակերտի բարբառը*, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1978, էջ 156-160. **Է.Աղայան**, *Մեղրու բարբառը*, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1954, էջ 247 և այլն:

² *Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր*, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1977, 141 էջ:

նությանը, արտահայտությանն ու ձևավորմանը:

Թեպետ սակավաթիվ են այդ զուգաբանությունները, բայց 20-րդ դարի 70-ականներից մինչև 21-րդ դարի սկիզբը ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագետների կողմից ՀԲԱ ծրագրով լրացված շուրջ 500 տետրերում շարահյուսական հատկանիշների արտացոլումը թույլ է տալիս ըստ հնարավորին ձևավորելու շարահյուսական իրողությունների տարածական բնութագրերը, ինչը և մենք փորձում ենք անել այս աշխատանքում:

Մեթոդ

Հիշյալ զուգաբանությունների արտահայտությունը մենք դիտարկել ենք բարբառային հայերենի արևմտյան և արևելյան խմբակցությունների բոլոր 11 բարբառախմբերը ներկայացնող 130-ից ավելի բնակավայրերի խոսվածքներում՝ փորձելով ըստ հնարավորին անդրադառնալ այս կամ այն բարբառային միավորի տարբերակային մի շարք դրսևորումների: Հետազոտությունը կատարել ենք ՀԲԱ ծրագրով լրացված տետրերի ընձեռած նյութի շրջանակում՝ շատ դեպքերում օգտագործելով նաև ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի աշխատակիցների ջանքերով և հատուկ ծրագրով թվայնացված տարբերակները: Ճիշտ է, միշտ չէ, որ լրացված նյութը լիարժեքորեն ճշգրիտ է և հավաստի, բայց տարբեր լրացնողների և բնակավայրերի տվյալների համադրումը թույլ է տալիս գրեթե անսխալ որոշել զուգաձևության արտահայտության հանգամանքները: Զուգաբանությունները դիտարկում ենք բարբառներում, բարբառախմբերում և ապա բարբառային խմբակցություններում՝ այդպիսով ըստ հնարավորին ամբողջացնելով հատկանիշների տարածական պատկերը:

Նախադասության անդամների շարադասության և համաձայնության գուգաբանություններ

Շարադասական էական գուգաբանություն է անորոշ հոդի դիրքը, որը հատկանշվում է բառի հանդեպ այդ մասնիկի նախադասկան հետադաս կիրառությամբ: Արևելյան խմբակցության բոլոր բարբառներում անորոշ հոդն ունի նախադաս կիրառություն (մի օր), և հետադաս գործածությունը բացառված է: Արևմտյան խմբակցությունում առկա է հոդի երեք տիպի դրսևորում. ա) նախադաս (մեկ օր), բ) հետադաս (օր մը), գ) նախադաս, և՛ հետադաս (մե օրըմ): Անորոշ հոդը հետադաս է արևմտյան խմբակցության ծայրհարավարևմտյան և հարավարևմտյան բարբառախմբերում, հյուսիսարևմտյան և ծայրհյուսիսարևմտյան բարբառախմբերում, նաև արևմտյան բարբառախմբում՝ բացառությամբ Կարնո և Եվդոկիայի բարբառները: Հարավկենտրոնական բարբառախմբում հետադաս անորոշ հոդ ունեն Տավորիկ-Մոտկանի և Տիգրանակերտի բարբառները, մասամբ՝ Մուշը և Սասունը, հարավային բարբառախմբում՝ Շատախի խոսվածքը: Արևմտյան խմբակցությունում անորոշ հոդը նախադաս կիրառություն ունի առավելաբար Վանում և Սասունում, Մուշի որոշ հատվածում (Ալաշկերտ, Արծկե, Արճեշ), Դիադինում: Այսպիսով, ընդհանուր առմամբ անորոշ հոդի նախադաս կիրառությունը հատուկ է բարբառների արևելյան խմբակցությանը, իսկ հետադաս կիրառությունը՝ արևմտյան խմբակցությանը, որի հարավկենտրոնական և հարավային բարբառախմբերում որոշակի տարածում ունի նաև անորոշ հոդի նախադաս կիրառությունը: Կարելի է ասել՝ այս երկու բարբառախմբերը դիտարկվող գուգաբանության առումով արևմտյան խմբակցության մյուս բարբառախմբերի և արևելյան խմբակցության միջև միջանկյալ դիրք են գրավում, ընդ որում՝ հոդի

նախադաս կիրառության առանձնակի դեպքերից բացի՝ հարավկենտրոնական և հարավային բարբառախմբերի Մշո, Սասունի և Վանի բարբառների որոշ խոսվածքներ ունեն անորոշ հոդի նախադաս և հետադաս զուգահեռ կիրառություններ, իսկ Մշո և Վանի այլ խոսվածքներ էլ ունեն անորոշ հոդի նախադաս և հետադաս միաժամանակյա կիրառության հատկանիշ: Վերջին հատկանիշը հատուկ է նաև արևմտյան խմբակցության արևմտյան բարբառախմբի Կարինի և Եվդոկիայի բարբառներին:

Բարբառային հայերենում նախադասության անդամների շարադասությունը որպես կանոն յուրահատկություններ հանդես չի բերում, առավելաբար ազատ է: Թերևս բացառություն է անձի անունով արտահայտված ենթակայի և ուղիղ խնդրի շարադասությունը, որը կարող է լինել կայուն կամ ազատ՝ փոխբացառող հարաբերությամբ: Արևելյան խմբակցության բոլոր բարբառային միավորներում ուղիղ խնդրի և ենթակայի շարադասությունը ազատ է (Գ՛իրքորը սիրում ա Հասմիկին – Հասմիկին ա սիրում Գ՛իրքորը): Արևմտյան խմբակցությունում ուղիղ խնդրի և ենթակայի կայուն շարադասություն ունեն բարբառային այն միավորները, որոնցում անձի անունով ուղիղ խնդիրը արտահայտվում է աննախդիր հայցականով՝ այդպիսով ձևով նույնանալով ուղղականին (Կիրքօրը կըսիրէ Անուշը – Կիրքօրը Անուշը գըսիրէ): Այդ հատկանիշն ունեն արևմտյան բարբառախմբի Շապին-Կարահիսարի, Սեբաստիայի, Խարբերդի, Երզնկայի, Ասլանբեկի, Ակնի, Արաբկիրի բարբառները, Պոլսի բարբառի որոշ խոսվածքներ, հյուսիսարևմտյան բարբառախմբի Եղեսիայի բարբառը, հարավկենտրոնական բարբառախմբի Տիգրանակերտի բարբառը: Ծայրահարավարևմտյան բարբառախմբի Քեսաբի բարբառում ևս ենթակա-ուղիղ խնդիր շարադասությունը կայուն է, չնայած ուղիղ խնդիրը ունենում է *q* նախդիր (Էզճալը հա սիրի ըսՍուրէնը – Էզճալը ըսՍուրէնը հա

սիրի): Արևմտյան խմբակցության բարբառային միավորներում անձի անունով արտահայտված ենթակայի և ուղիղ խնդրի շարադասությունը ազատ է, եթե դրանցում անձի անունով ուղիղ խնդիրն արտահայտվում է կա՛մ տրականով, կա՛մ նախդրավոր հայցականով (Քիրքօրը Վարթանին շօդ գի սիրէ- Վարթանին Քիրքօրը գի սիրէ, Գ՛իրքոր կը սիրա զԱրշագ - զԱրշագ կը սիրա Գ՛իրքոր): Նման բարբառային միավորներից են ծայրհարավարևմտյան բարբառախմբի Բեյլանի բարբառը, հարավարևմտյան բարբառախմբի բոլոր բարբառները, արևմտյան բարբառախմբի Կարինի, Եվդոկիայի, Մալաթիայի բարբառները, Պոլսի բարբառի որոշ խոսվածքներ, հյուսիսարևմտյան բարբառախմբի Համշենի բարբառը, հարավկենտրոնական (բացի Տիգրանականերտի բարբառը) և հարավային բարբառախմբերի բարբառները: Ընդհանուր առմամբ՝ եթե արևելյան խմբակցությունում *ենթակա- ուղիղ խնդիր* ազատ շարադասությունը պայմանավորված է հոլովական ձևերի տարբերակվածությամբ, ապա արևմտյան խմբակցությունում այդ տարբերակվածությունը պայմանավորված է հայցականի նախդրավոր կազմությամբ, այլ դեպքերում՝ հատկապես հարավկենտրոնական և հարավային բարբառախմբերում, հոլովական ձևերի տարբերակվածությամբ:

Բարբառային հայերենում շարադասական յուրահատկություններ ունեն որոշ կապեր (հետ, մեջ, մոտ, վրա, առջև): Դրանք բարբառների մեծ մասում ունեն հետադաս կիրառություն (քարին քօվը, հօրը հեղ, ջամփուն վըրա, գ՛էդին մէջը), իսկ մի մասում՝ նախադաս կիրառություն (մօդ քարին, խըդ խօր, վըր ճանփուն, մըչ ջ՛ըրին): Վերջին հատկանիշը թույլ դրսևորում ունի ծայրհյուսիսարևմտյան խմբակցության Առդեալի բարբառում, մասնակի դրսևորումներ ունի հարավկենտրոնական (Մուշի և Սասունի որոշ խոս-

վածքներ, Տավոռիկ-Մոտկանի բարբառ) և հարավային բարբառախմբերում (Վանի որոշ խոսվածքներ): Այլ կերպ ասած՝ հիշյալ կապերի նախադաս կիրառությունը մասամբ հատուկ է արևմտյան խմբակցության հարավկենտրոնական և հարավային բարբառախմբերին:

ՀՔԱ ծրագրում նախադասության անդամների համաձայնությանն առնչվող միայն մեկ զուգաբանություն կա, և այն վերաբերում է հատկացուցչի և հատկացյալի համաձայնությանը ըստ որոշյալության կարգի (կէդին ճուրը, արդին խօդը): Նախադասության այդ անդամների համաձայնությունը ավելի տարածված է արևմտյան խմբակցությունում, որում այն հատուկ է ծայրհարավարևմտյան, հարավարևմտյան, արևմտյան (բացի Կարնո բարբառը) և հյուսիսարևմտյան բարբառախմբերին: Արևելյան խմբակցությունում այս հատկանիշը տարածված է ծայրհյուսիսարևելյան բարբառախմբում և հատուկ է Ղարաբաղի, Հաղբույթի, Հավարիկի բարբառների խոսվածքների մեծ մասին, մասամբ նաև՝ արևելյան խմբակցության Ագուլիսի բարբառի:

Նախադասության անդամների արտահայտության ու ձևավորման զուգաբանություններ

Շարահյուսական համակարգին առնչվող ավելի շատ զուգաբանություններ վերաբերում են նախադասության այս կամ այն անդամի արտահայտությանն ու ձևավորմանը: Դրսևորման յուրահատկություններ է հանդես բերում ուղիղ խնդիրը ինչպես անձի, այնպես էլ իրի անունների դեպքում: Անձի անունների դեպքում ուղիղ խնդիրը բարբառային հայերենում ունի արտահայտության երեք եղանակ՝ 1. տրական հոլովով (սիրուշ ախչկօնը. հայսին դօնուշ), 2. հայցական հոլովով (հարսը դանէլ. դըղան ձէձէլ), 3. նախդրավոր հայցականով (սիրիլ գախձիգ. դանիլ գհառս):

Նախադասության այս անդամը անձերի անունների դեպքում տրական հոլովով է արտահայտվում արևելյան խմբակցության բոլոր բարբառախմբերում, արևմտյան խմբակցության հարավային բարբառախմբում: Նկատելի է, որ ուղիղ խնդրի՝ տրականով ձևավորման հատկանիշը ամենատարածվածն է, այն մասամբ տարածված է արևմտյան խմբակցության մյուս բոլոր բարբառախմբերում ևս՝ բացառությամբ ծայրհյուսիսարևմտյան բարբառախմբի: Անձի անվան դեպքում ուղիղ խնդրի՝ հայցական հոլովով արտահայտությունը տարածված է արևմտյան խմբակցության գրեթե բոլոր բարբառախմբերում, բացառություն են ծայրհյուսիսարևմտյան և հարավային բարբառախմբերը: Անձի անուն ուղիղ խնդիրը նախդրավոր հայցականով է արտահայտվում հարավկենտրոնական բարբառախմբի Տալվորիկ-Մոտկանի և Սասունի բարբառներում, Մշո բարբառի մի շարք խոսվածքներում, ծայրհարավարևմտյան բարբառախմբի Քեսաբի բարբառում և ծայրհյուսիսարևմտյան բարբառախմբում:

Իրի անունների դեպքում ուղիղ խնդիրը դրսևորվում է կա՛մ հայցական հոլովով (Հակովիը տուն ա սարքըմ), կ՛ամ նախդրավոր հայցականով (Հ՛ագոփ ըզտուն կըշիքա): Ուղիղ խնդիրը հայցականով է արտահայտվում արևելյան խմբակցության բոլոր բարբառախմբերում, արևմտյան խմբակցության հարավարևմտյան, արևմրտյան, հյուսիսարևմտյան բարբառախմբերում, ինչպես նաև ծայրհարավարևմտյան, հարավկենտրոնական և հարավային բարբառախմբերի մի շարք բարբառներում կամ խոսվածքներում: Իրի անուն ուղիղ խնդիրը նախդրավոր հայցականով է արտահայտվում ծայրհյուսիսարևմտյան բարբառախմբում, ծայրհարավարևմտյան բարբառախմբի Քեսաբի բարբառում, հարավկենտրոնական բարբառա-

խմբի Սասունի բարբառում, Մշո և Տալվորիկ-Մոսկանի բարբառների մի շարք խոսվածքներում, հարավային բարբառախմբի Վանի բարբառի որոշ խոսվածքներում:

Բարբառային հայերենն ունի նախադասության անդամների ձևավորման ու արտահայտության հետաքրքրական որոշ իրողություններ, որոնց տարածական ընդգրկումը խիստ սահմանափակ բնույթ է կրում: Մասնավորապես, ուղիղ խնդրի փոխարեն *զը* մասնիկի գործածություն արձանագրել ենք միայն ծայրհարավարևմտյան խմբակցության Քեսաբի բարբառում (դիտոձ իմ զը. *հա* պիրին զը): Մեկ այլ հատկանիշ՝ «դիմորոշ հոդի գործածություն բայի հետ՝ խնդրի փոխարեն» (կըտանեմըտ /քեզ կտանեմ/, կասեմըտ /քեզ կասեմ/), հանդիպում է միայն արևելյան խմբակցության հարավարևելյան խմբակցության Խոյ-Մարաղայի բարբառի որոշ խոսվածքներում:

Բարբառային հայերենում բազմազան ու խառը պատկեր ունեն նպատակի և տեղի պարագաների դրսևորումները: Նպատակի պարագան բարբառներում արտահայտվում է մի շարք եղանակներով՝ 1. անորոշ դերբայի ուղիղ ձևով (էզավ հաց ուղել), 2. անորոշ դերբայի տրական հոլովով (էկավ խաց ուտելու), 3. ենթակայական դերբայով (էկավ հաց ուտող), 4. ըղձական կամ դիմավոր այլ բայաձևով (էկան ախճիկ ուզեն, էկավ խաց կըուտի): Անորոշ դերբայի ուղիղ ձևով նպատակի պարագայի գործածություն դիտարկվել է արևմտյան խմբակցության հարավարևմտյան բարբառախմբի Հաջընի բարբառում, արևմտյան բարբառախմբի Սեբաստիայի, Մալաթիայի, Արաբկիրի բարբառներում, Պոլսի բարբառի որոշ խոսվածքներում, հյուսիսարևմտյան բարբառախմբի Համշենի բարբառում, հարավկենտրոնական բարբառախմբի Մուշի և հարավային բարբառախմբի Վանի բարբառների որոշ խոսվածքներում: Բար-

բառների արևելյան խմբակցությունում այս հատկանիշն արձանագրվել է հարավարևելյան բարբառախմբի Խոյ-Մարադայի, հյուսիսարևելյան բարբառախմբի Արարատյան բարբառների որոշ խոսվածքներում, ծայրհյուսիսարևելյան բարբառախմբի Ղարաբաղի, Հաղրուփի, Կոզենի, Շամախիի, Ղազախ-Կիրովաբադի բարբառային միավորների որոշ խոսվածքներում: Նպատակի պարագան բարբառային հայերենում առավելաբար արտահայտվում է անորոշ դերբայի տրական հոլովով: Այդ հատկանիշը բնորոշ է ծայրհարավարևմտյան և ծայրհյուսիսարևմտյան բարբառախմբերին, այս կամ այն չափով դրսևորվում է երկու խմբակցությունների մյուս բոլոր բարբառախմբերում: Ի տարբերություն այս հատկանիշի՝ նպատակի պարագայի արտահայտությունը ենթակայական դերբայով արձանագրվել է միայն արևելյան խմբակցության Արարատյան բարբառի Լոռու խոսվածքում: Առավելաբար արևելյան խմբակցության բարբառային միավորներում (ծայրհյուսիսարևելյան բարբառախմբի Ղարաբաղի, Հաղրուփի, Ղազախ-Կիրովաբադի որոշ խոսվածքներ, հյուսիսարևելյան խմբակցության Արարատյան և Ջուղայի բարբառների որոշ խոսվածքներ, Բայազետի բարբառ, արևելյան բարբառախմբի Ագուլիսի բարբառի որոշ խոսվածքներ) և հաճախ սրանց հարող՝ արևմտյան խմբակցության հարավկենտրոնական (Տավրիկ-Մոտկանի, Մշո, Սասունի բարբառներ) ու հարավային (Վանի բարբառ) բարբառախմբերում է արձանագրվել նպատակի պարագայի արտահայտությունը ըղձականով կամ դիմավոր այլ բայաձևով: Հատկանիշն արձանագրվել է նաև արևմտյան բարբառախմբի Երզնկայի բարբառում:

Բարբառներում տարատեսակ ձևերով է արտահայտվում նաև տեղի պարագան: Նախադասության այս անդամը կարող է դրսևորվել՝ 1. հայցական հոլովով (աբրըմ ա գեղը), 2. տրական հոլովով (գ՛եղին է ապրում), 3. ներգոյական հոլովով (գ՛եղմըն ա աբրըմ), 4.

նախդրիվ տրականով կամ հայցականով (ի լազմնը խրմուր գու), 5. կապերի միջոցով (ամբնի մեծ): Հայցական հոլովով տեղի պարագայի գործածություն այս կամ այն չափով արձանագրվել է երկու խմբակցությունների գրեթե բոլոր բարբառախմբերում, բացառությամբ արևելյան բարբառախումբը: Տեղի պարագայի արտահայտություն տրական հոլովով արձանագրվել է արևմտյան խմբակցության հյուսիսարևմտյան բարբառախմբի Համշենի բարբառում և արևմտյան բարբառախմբի Պոլսի բարբառի Տրապիզոնի խոսվածքում: Արևելյան խմբակցությունում այս հատկանիշն ունեն հյուսիսարևելյան բարբառախմբի Արարատյան և Ջուղայի բարբառների որոշ խոսվածքներ: Ներգոյական հոլովով տեղի պարագա հանդիպում է արևելյան խմբակցության գրեթե բոլոր բարբառախմբերում: Բացառություն է հարավարևելյան բարբառախումբը: Ներգոյականով տեղի պարագա չունի նաև հյուսիսարևելյան բարբառախմբի Բայազետի բարբառը: Առանձնանում է նաև ծայրհարավարևմտյան բարբառախմբի Քեսաբի բարբառը, որում հանդիպում է տեղի պարագայի՝ նախդրիվ հայցականով արտահայտություն: Բարբառային հայերենի բոլոր դրսևորումներում տեղի պարագան արտահայտվում է նաև կապերի միջոցով:

Շարահյուսական էական հատկանիշ է նաև *ունենմ կամբայ*ների հետ ենթակայի՝ տրական հոլովով արտահայտությունը (Ընծի մեզ ձի ունիմ. Գիբկորին տըղէ մի կա): Այս հատկանիշը որոշ բացառություններով ընդհանուր է արևելյան խմբակցության բոլոր բարբառախմբերի և արևմտյան խմբակցության հարավկենտրոնական և հարավային բարբառախմբերի համար: Հատկանիշը դիտվել է նաև արևմտյան բարբառախմբի Մալաթիայի բարբառում:

Ինչ խոսք, դիտարկված իրողություններով շարահյուսական գուգաբանություններն ու հատկանիշները չեն սպառվում: Եղածներին կարելի է ավելացնել ուրիշները, օրինակ՝

1. Ձևի պարագայի արտահայտությունը՝

ա) անորոշ դերբայի գործիական հոլովով (բոբբռալօվ)

բ) ընթացակցական դերբայով (բոբբռալեն)

2. Վիճակի պարագայի արտահայտությունը՝

ա) տրականով (բըքին, ձ'անը, անձըրեվին, մըթանը, ցըռտին)

բ) կապերով (ձյան ժամանակ, գ'ախ, վախտ)

3. Ժամանակի պարագայի արտահայտությունը՝

ա) անորոշ դերբայի տրականով (գ'ալուն, էթալուն, նըշանվելուն)

բ) կապերով (գալու ժամանակ, վախտ, գախ)

4. *Համար, նըման, պես* կապերի հետ կապակցվող բառի հոլովը՝

ա) սեռական (քօ խըմար, քօ նըման)

բ) տրական (քեզի համար, քեզի պես)

5. Ուղևորության (գնալ, գալ) բայերի մոտ անձի անունով արտահայտված անդամի արտահայտությունը՝

ա) տրականով (եկան մեզի, գնացին Պօղօսէնց)

բ) կապերով կամ գոյականական կապակցությամբ (եկան մեր տուն, մեզ մոտ)

6. Համեմատության խնդրի արտահայտությունը՝

ա) բացառական հոլովով (քեզնից բոյօվ)

բ) *քան* (քանց, զանդ, հինչ) + *հայցականով կապի խնդիր* կապակցությամբ (Օսօ դունը զանդ օնօ դունը մինձ է)

զ) սեռական (տրական) + վրա կառույցով (էն վեր զի ճոչ ի.
էստու վրա վատթար)

7. Միջոցի խնդրի արտահայտությունը՝

ա) գործիական հոլովով (ջ'ըբով)

բ) չ նախդրով և հայցական հոլովով (ի ճեուր):

Եզրակացություն

Դիտարկված շարահյուսական գուգաբանությունները, որպես կանոն ունենալով տարբերակային դրսևորումներ և կազմելով բարբառային հատկանիշների փնջեր, երևան են հանում իրողությունների տարածական հետաքրքրական պատկեր, որի նկարագրությունը և վերլուծությունը կարող է էականորեն նպաստել բարբառային միավորների փոխհարաբերությունները ճշգրտելուն: Նկատելի է, որ շարահյուսական հատկանիշներով ևս կարող են տարբերվել ինչպես բարբառային խմբակցություններ ու բարբառախմբեր, այնպես էլ բարբառներ ու խոսվածքներ: Մյուս կողմից՝ շարահյուսական գուգաբանությունների դիտարկումը ուրվագծում է երկու խմբակցությունների շփման գոտում որոշակի ընդհանրությունների առկայությունը, որն արտահայտվում է, օրինակ, արևմրտյան խմբակցության հարավկենտրոնական ու հարավային բարբառախմբերում արևելյաններին հատուկ հատկանիշների զգալի առկայությամբ: Ինչպես լեզվական մյուս հատկանիշները, շարահյուսական իրողությունները ևս տարբեր են ըստ ընդգրկման. մեծ տարածում ունեցող հատկանիշների կողքին կարող են լինել բավականին սահմանափակ ընդգրկում ունեցողներ: Շարահյուսական իրողությունները ևս կարող են լինել փոխբացառող և գուգահեռ դրսևորվող և այլն:

Շարահյուսական գուգաբանությունները բարբառային լեզվի բնութագրական և էական իրողություններ են, դրանց վերհանումն ու վերլուծությունը կարևոր նշանակություն ունեն ինչպես բարբառային լեզվի, այնպես էլ ընդհանուր լեզվի ուսումնասիրությունը ամբողջացնելու առումով:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1.

Հայերենի 11 բարբառախմբերում շարահյուսական գուգաբանությունների արտահայտության աղյուսակ.

Զուգաբանություններ	Ա. ծիսմ	Ա. հվսմ	Ա. ամ	Ա. հսմ	Ա. ծիսմ	Ա. հվկ	Ա. հվ	Բ. հվսլ	Բ. հսլ	Բ. ծիսլ	Բ. սլ
663. անորոշ հողի նախադաս կամ հետադաս գործածություն	2	2	2 21	2	2	21	12	1	1	1	1
665. հատկացուցչի և հատկացյալի համաձայնություն	1	1	12	1	2	2	2	2	2	12	21
667. նախադասության ենթակայի և ուղիղ խնդրի շարադասություն	12	2	12	12	2	12	2	2	2	2	2
672. ուղիղ խնդրի դրսևորումը անձի անուններում	123	12	12	12	3	123	1	1	1	1	1
673. ուղիղ խնդրի դրսևորումը իրի անուններում	12	1	1	1	2	12	12	1	1	1	1
674. ուղիղ խնդրի փոխարեն զը մասնիկի գործածություն	12	2	2	2	2	2	2	2	2	2	2

675. դիմորոշ հողի գործածություն բայի հետ՝ խնդրի փոխարեն	2	2	2	2	2	2	2	12	2	2	2
676. նպատակի պա- րագայի արտահայ- տությունը	2	12	214	12	2	241	412	21	2413	124	24
677. տեղի պարագայի դրսևորումը	145	15	152	125	15	15	15	15	3125	351	3125
679. ունեւ և կամ բայերի հետ տրական հոլովով ենթակա	2	2	21	2	2	1	1	12	12	12	12
680. հետ, մեջ, մոտ, վրա, առջև կապերի կիրառությունը	2	2	2	2	21	12	12	2	2	2	2

Ծանոթություններ: 1. Զուգաբանությունների տարբերակային դրսևորումները ներկայացված են թվերով: Նույն վանդակում մեկից ավելի թվերով նշվում է համապատասխան հատկանիշների գու-գահեռ առկայությունը: Թվերի չափերի տարբերությամբ արձանագրվում է հատկանիշների անհավասար բաշխումը:

2. Աղյուսակում բարբառախմբերը ներկայացված են ըստ Գ.Ջահուկյանի ընդունած հերթականության, այն է՝ Ա.ծհամ.՝ ծայր-հարավարևմտյան, Ա.հվամ.՝ հարավարևմտյան, Ա.ամ.՝ արևմտյան, Ա.հսամ.՝ հյուսիսարևմտյան, Ա.ծհսամ.՝ ծայրհյուսիսարևմտյան, Ա.հվկ.՝ հարավկենտրոնական, Ա.հվ.՝ հարավային, Բ.հվալ.՝ հարավարևելյան, Բ.հսալ.՝ հյուսիսարևելյան, Բ. ծհսալ.՝ ծայրհյուսիսարևելյան, Բ.ալ.՝ արևելյան: Զուգաբանությունները ներկայացված են ՀԲԱ ծրագրի համարակալմամբ:

Հավելված 2.

ՇԱՐԱՀՅՈՒՄԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՍՏ ՀՐ ԾՐԱԳՐԻ

663. անորոշ հողի

1. նախադաս գործածություն
2. ետադաս գործածություն

665. հատկացուցչի և հատկացյալի համաձայնություն

1. որոշյալ հատկացուցչի հետ որոշյալ հատկացյալ
2. որոշյալ հատկացյալի հետ անորոշ հատկացուցիչ

667. նախադասության ենթակայի և ուղիղ խնդրի

1. կայուն շարադասություն
2. ազատ շարադասությամբ

672. ուղիղ խնդրի դրսևորումը անձի անուններում

1. տրական հոլովով
2. հայցականով
3. նախդրավոր հայցականով

673. ուղիղ խնդրի դրսևորումը իրի անուններում

1. հայցականով
2. նախդրավոր հայցականով

674. Ուղիղ խնդրի փոխարեն *զը* մասնիկ

1. կա
2. չկա

675. Դիմորոշ հողը՝ բայի հետ

1. կա
2. չկա

676. նպատակի պարագայի արտահայտ.

1. անորոշ դերբայի ուղիղ ձևով
2. անորոշ դերբայի տրական հոլովով
3. ենթակայական դերբայով
4. ըղձ. կամ այլ դիմավոր բայաձևով,

677. տեղի պարագայի դրսևորումը

1. հայցական հոլովով
2. տրական հոլովով
3. ներգոյական հոլովով
4. նախդրիվ տր. կամ հայց.
5. կապերի միջոցով

679. *ուներ, կամ* բայերի հետ տրակ. ենթ.

1. կա
2. չկա

680. *հետ, մեջ, մոտ, վրա, առջև* կապերի կիրառությունը

1. նախադաս
2. ետադաս

Ծանոթություն: Զուգաբանությունների տարբերակային դրսևորումներում ըստ անհրաժեշտության կատարել ենք լրացումներ:

Katvalyan V., Kharatyan M., Sahakyan N. - Expression of Some Syntactic isoglosses in Armenian Dialects.- The article presents territorial manifestations of about ten syntactic isoglosses in dialectal Armenian. They are observed in more than 130 speeches, representing all dialect groups of the Armenian language. Isoglosses refer to both the order and agreement of sentence members, as well as their expression and formation. It is noticeable that both dialect groups and dialects and speeches can differ in syntactic features. They also determine the relationship between dialect units. Like other dialectal features, syntactic features also vary in prevalence: in addition to those that are widely spread, there are also those that have a rather limited scope. In the article, a number of new syntactic isoglosses are formulated, which can also be included in the field of studying dialectal realities.

Key words: syntax, dialect group, direct object, adverbial clause of purpose, adverbial clause of place, indefinite article, case.

Катвалян В., Харатян М., Саакян Н.- Выражение некоторых синтаксических изоглоссов в армянских диалектах.-В статье представлены территориальные проявления около десяти синтаксических изоглосс в диалектном армянском языке. Они наблюдаются более чем в 130 говорах, представляющих все диалектные группы армянского языка. Изоглоссы относятся как к порядку и согласованию членов предложения, так и к их выражению и формированию. Заметно, что как диалектные группы, так и

диалекты и говоры могут различаться по синтаксическим особенностям. Они также определяют взаимоотношения между диалектными единицами. Как и другие диалектные признаки, синтаксические признаки также различаются по распространенности: рядом с теми, у кого большое распространение, могут быть те, у которых охват довольно ограничен. В работе сформулирован ряд новых синтаксических изоглосс, которые также могут быть включены в область изучения диалектных реалий.

Ключевые слова: синтаксис, диалектная группа, прямое дополнение, обстоятельство цели, обстоятельство места, неопределенный артикль, падеж.